

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» սեպտեմբերի 2013թ.

N_____ -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 69-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետով, 67-րդ հոդվածի 1-ին կետի ժբ) ենթակետով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի «Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից շահութաբաժինների Երևանի բյուջե վճարման գործընթացը կանոնակարգելու մասին» N 69-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում «20 տոկոսից ոչ պակաս գումար» բառերը փոխարինել «40 տոկոսի չափով» բառերով.

2) Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

3) Որոշման 3-րդ կետում «20 տոկոսից» բառերը փոխարինել «40 տոկոսից» բառերով.

4) Որոշման N1 հավելվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունները տարեկան ընդհանուր ժողովի գումարումից 45 օր առաջ, բայց ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա ապրիլի 15-ը, Երևանի քաղաքապետին են ներկայացնում գուտ շահույթի բաշխման ուղղությունների վերաբերյալ առաջարկություններ համաձայն սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված ձևի, դրանց կցելով հաշվետու տարվա ֆինանսական հաշվետվությունների NN 1-2 ձևերը:».

5) Որոշման N1 հավելվածի 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումը կիրառվում է 2012 թվականի և հաջորդ տարիների գործունեության արդյունքում առևտրային կազմակերպությունների կողմից ստացվող շահութաբաժինների հաշվարկման և վճարման գործընթացների նկատմամբ:

3. Հաստատել Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2012 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած գուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը՝ համաձայն հավելվածի:

4. Սահմանել, որ սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությունների կողմից շահութաբաժինների վճարումներն Երևանի բյուջե կատարվում են մինչև 2013 թվականի հոկտեմբերի 1-ը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 69-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով և 73-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 49-րդ, 50-րդ և 67-րդ հոդվածների պահանջներով, Երևան քաղաքի ավագանին, գործելով որպես Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների բաժնետերերի ընդհանուր ժողով, սահմանում է Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից Երևանի բյուջե շահութաբաժինների հաշվարկման և վճարման կարգը, կանոնակարգում է շահութաբաժինների վճարման գործընթացում Երևանի քաղաքապետարանի ստորաբաժանումների լիազորությունները և աշխատանքի կազմակերպման կարգը:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 3-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N202-Ն որոշմամբ պետության սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժնի չափը սահմանվել է 50%, ինչպես նաև հանվել է չհաշվարկվող 3000.0 հազ. դրամի արտոնություն կիրառելու շեմը, առաջարկվում է ցուցաբերել նմանօրինակ մոտեցում Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների շահութաբաժնի հաշվարկման բազայի ձևավորման խնդրում, ընդ որում 50%-ի փոխարեն նախատեսել 40% ու հանել 3000.0 հազ. դրամի արտոնությունը, սահմանելով միասնական և հավասար մոտեցում բոլոր կազմակերպությունների համար: Կազմակերպությունների ֆինանսական վիճակի վրա ազդեցության չափը նվազագույնի հասցնելու նպատակով համայնքային ենթակայության կազմակերպությունների համար շահութաբաժնի չափը սահմանվել է 40%, քանի որ հաշվի է առնվել, որ կազմակերպություններում զուտ շահույթը ձևավորվում է հաշվետու տարվա հաշվեգրված եկամուտների և ծախսերի դրական տարբերությունից, իսկ հաշվեգրված եկամուտներում ոչ բոլոր եկամտատեսակներն են (անհատույց ակտիվներ՝ նյութական արժեքներ և հիմնական միջոցներ, ժամկետանց կրեդիտորական պարտավորությունների դուրսգրումներ, նախորդ ժամանակաշրջանի ճշտումներ), որ ակնկալում են ֆինանսական (դրամական) միջոցների հոսքեր (մուտքեր):

Հաշվի առնելով, որ Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից շահութաբաժինների Երևանի բյուջե վճարման գործընթացը կանոնակարգելու մասին» N 69-Ա որոշմամբ հաստատված «Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպություններում շահութաբաժինների վճարման գործընթացի կազմակերպման» կարգի 5-րդ կետով սահմանված է, որ Երևանի բյուջե վճարման ենթակա տարեկան

շահութաբաժինների չափերի հաստատման մասին հարցը Երևան քաղաքի ավագանու հաստատմանն է ներկայացվում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության կողմից, ինչպես նաև ելնելով վարչության գործառնություններից, նպատակահարմար է վերախմբագրել վերոհիշյալ կարգի 2-րդ կետը ներկայացված տարբերակով:

2. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի N69-Ա որոշման կատարմամբ պայմանավորված անհրաժեշտ է հաստատել Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2012 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը:

Համայնքի սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների 2012 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման համար հիմք են հանդիսացել կազմակերպությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև զուտ շահույթի բաշխման ուղղությունների վերաբերյալ կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունները:

Համայնքի սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող և գործունեություն ծավալած 71 ընկերություններից 2012 թվականի տարեկան տնտեսական գործունեության արդյունքներով շահույթով են աշխատել 44 ընկերություններ, որոնց զուտ շահույթը կազմել է 241411.0 հազ. դրամ:

Շահույթով աշխատած 44 կազմակերպությունների ընդհանուր զուտ շահույթից՝ 241411 հազ. դրամից 40%-ը կազմում է 96564.4 հազ. դրամ, սակայն Երևանի բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների գումարը կկազմի 94886.8 հազ. դրամ, հաշվի առնելով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ կետի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի դ) ենթակետի հիմքով «Արաբկիր-Մերվիս», «Արշակունյաց պոլիկլինիկա» և «Մուրբ Աստվածածին» ՓԲԸ-ների մոտ առկա են շահութաբաժինների վճարման սահմանափակումներ՝ զուտ ակտիվների արժեքը կպակասի կանոնադրական կապիտալից շահութաբաժինների վճարման հետևանքով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 69-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՍԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՄՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի N 69-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2012 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնների չափերը հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 69-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՁՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՍԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՍ ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի N 69-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2012 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնների չափերը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2012 թվականի տարեկան գուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը

հազ.դրամ							
Հ/Հ	Կազմակերպության անվանումը	2012 թվականի տարեկան գուտ շահույթ	Համայնքի մասնակցության շահութաբաժին	Պահուստային կապիտալ	Սպառման հիմնադրամ	Այլ	Վնասների նվազեցում
1	«Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն» ՓԲԸ	10112.0	4044.8	505.6	3500.0	2061.6	
2	«Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն» ՓԲԸ	4640.0	1856.0	1392.0		1392.0	
3	Երևանի քաղաքապետարանի «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» ՓԲԸ-Ի «Նոր Արաբկիր» ԱԿ» ԴՓԲԸ	1382.0	552.8	829.2			
4	«Շտապբուժօգնություն» ՓԲԸ	5947.0	2378.8	1811.0	1757.2		
5	«Ն.Բ.Հակոբյանի անվան ընդհանուր հիգիենայի և մասնագիտական հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ	30.0	12.0	18.0			
6	«Սուրբ Աստվածածին» ծննդատուն» ՓԲԸ	295.0					295.0
7	«Հակատուբերկույզային դիսպանսեր» ՓԲԸ	4.0	1.6	2.4			
8	«Քաղաքային էնդոկրին դիսպանսեր» ՓԲԸ	160.0	64.0			96.0	
9	«Դավիթ Անհաղթ ԲԿ» ՓԲԸ	657.0	262.8	394.2			
10	«Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ	128.0	51.2				76.8
11	«Թիվ 7 պոլիկլինիկա» ՓԲԸ	290.0	116.0	174.0			
12	«Թիվ 8 պոլիկլինիկա» ՓԲԸ	3837.0	1534.8	1363.6	938.6		
13	«Թիվ 13 պոլիկլինիկա» ՓԲԸ	680.0	272.0	136.0		272.0	
14	«Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ	765.0	306.0	114.8	229.5	114.7	
15	«Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ	448.0	179.2	268.8			
16	«Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ	154.0	61.6	92.4			
17	«Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ	9281.0	3712.4	367.0	3500.0	1701.6	
18	«Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ	50.0	20.0	30.0			
19	«Նորագավիթ պոլիկլինիկա» ՓԲԸ	99.0	39.6	59.4			
20	«Սարի թաղ» պոլիկլինիկա» ՓԲԸ	1321.0	528.4	396.0		396.6	
21	«Արշակունյաց պոլիկլինիկա» ՓԲԸ	941.0		941.0			
22	«Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ	3.0	1.2			1.8	
23	«Արաբկիր մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ	17.0	6.8	10.2			
24	«Երևանտրանս» ՓԲԸ	81032.0	32412.8	3793.6	44825.6		
25	«Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՓԲԸ	21228.0	8491.2	1060.0	8000.0	3676.8	
26	«Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ	1117.0	446.8			670.2	

27	«Երևաննախագիծ» ՓԲԸ	25133.0	10053.2	1257.6	5370.2		8452.0
28	«Քաղաքաշինություն» ՓԲԸ	43239.0	17295.6	2931.0	21012.4	2000.0	
29	«Նոր բարեկարգում» ՓԲԸ	2251.0	900.4			1350.6	
30	«Երբաղույս» ՓԲԸ	4692.0	1876.8			2815.2	
31	«Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ	1724.0	689.6	500.0	400.0	134.4	
32	«Հայ-Արտ» Մշակութային կենտրոն ՓԲԸ	76.0	30.4			45.6	
33	«Մաքուր Աջափնյակ» ՓԲԸ	193.0	77.2		22.8	93.0	
34	«Աջափնյակ-վերելակ» ՓԲԸ	442.0	176.8	265.2			
35	«Արաբկիր-Սերվիս» ՓԲԸ	2958.0					2958.0
36	«Դավթաշենի կանաչապատում» ՓԲԸ	576.0	230.4	90.0	255.6		
37	Էրեբունի թաղային համայնքի «Վարդավառ զբոսայգի» ՓԲԸ	1638.0	655.2				982.8
38	«Կենտրոն-կանաչապատում» ՓԲԸ	3999.0	1599.6			2399.4	
39	«Անխափան վերելակ» ՓԲԸ	1024.0	409.6	100.0	300.0	214.4	
40	Երևանի Նորք-Մարաշի թաղային համայնքի «Կանաչ բարձունք» ՓԲԸ	1762.0	704.8	88.1	469.1	297.0	203
41	«Նուբարաշեն» ՓԲԸ	122.0	48.8	73.2			
42	«Օցելլոտ» ՓԲԸ	6460.0	2584.0	268.0		3608.0	
43	«Երթաշարժ» ՓԲԸ	24.0	9.6			14.4	
44	«Քանաքեռ-Զեյթուն Բարեկարգում» ՓԲԸ	480.0	192.0	208.0	40.0	40.0	
	ԸՆԴԱՄԵՆԸ	241411.0	94886.8	19540.3	90621.0	23395.3	12967.6